ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2014թ սեպտեմբերի 17 **N 92-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 107 հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. 2014 թվականի դեկտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ճարճակիս, Հացաշեն և Գեղադիր գյուղական համայնքներում նշանակել և անցկացնել համայնքի ղեկավարի հերթական ընտրություններ:
2. 2014 թվականի դեկտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վերին Սասնաշեն գյուղական համայնքում նշանակել և անցկացնել ավագանու անդամների հերթական ընտրություն:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ